խութիւններից, ձգտում է դէպի հոգեւորը, դէպի երկնայինը: Տեղ-տեղ ածում էին չոնգուրների վրայ: Այդ ձայները խիստ թախծալի եղանակով հնչում էին գիշերային լռութեան մէջ, որպէս վշտալի սրտի դառն մրմունջներ: Վանեցու սեղանի երգն անգամ խառն է լինում արտասուքի հետ...

Երկար լսում էի ես: Երբեմն գիշերային խաղաղութիւնը վրդովում էր խառնաշփոթ աղաղակներով: Աղմուկը հետզհետէ սաստկանում էր: Ահա լսելի եղաւ հրացանի խուլ նետում, եւ իսկոյն տիրեց խորին լռութիւն...

— Էլի կատաղե՛լ են անզգամները, — ասաց վարպետը՝ շտապով իմ մօտից անցնելով: — Առաւօտեան կամ մի երկու սպանուածներ կունենանք, կամ մի քանի վիրաւորուածներ...

Այնտեղ սպանում էին, իսկ այստեղ հոգեւոր երգեր էին երգում:

Բայց մեր հիւրընկալը, որպէս երեւում էր, միայն աղօթքով բաւականացող մարդիկներից չէր: Նա մտաւ սենեակը, դրեց Ասլանի մօտ մի շիշ օղի եւ ափսէի մէջ խորոված տարեխ եւ, խլելով սենեակի պատից քարշ ընկած զէնքերից մէկը, կրկին շտապով դուրս եկաւ:

— Ու՞ր էք գնում, — հարցրեց Ասլանը:

— Մեր թաղում աղմուկ կայ, գնում եմ տեսնելու՝ ի՞նչ է պատահել, — պատասխանեց նա եւ, մի բան մտաբերելով, կանգ առեց շեմքի վրայ: — Ձեր անունով նամակներ են ստացուած, — ասաց նա, հանելով ծոցից մի ստուար կապոց եւ ձգելով Ասլանի մօտ:

Նա վազելով ցած իջաւ սանդուղքներից:

Ասլանը լռութեամբ վեր առեց նամակների ծրարները, մօտեցաւ ճրագին եւ սկսեց ուշադրութեամբ կարդալ: Ես հեռու նստած, հետազօտում էի նրա դէմքի փոփոխակի արտայայտութիւնները: Նրա սիրտը խռովութեան մէջ էր: Այն հեզ եւ խաղաղ աչքերը վառւում էին բարկութեան բոցով: Նա, որ այնքան զգոյշ էր, կարծես մոռացաւ իմ ներկայութիւնը եւ նամակներից մէկը, դեռ չվերջացրած, նետեց յատակի վրայ եւ ձեռքը յուսահատական կերպով տարաւ դէպի ճակատը, բռնեց աչքերը: Ի՞նչ էր պատահել: Նրա դողդոջուն շրթունքները մեքենաբար արտասանեցին միայն մի բառ՝ «թշոառակա՛ն»... Սի մեծ անյաջողութիւն միայն կարող էր Ասլանին այդ աստիճան զայրացնել: Նա կրկին վեր առեց չաւարտուած նամակը եւ շարունակեց կարդալ: Յետոյ բռնեց ճրագի վրայ, եւ բարակ թուղթը մի վայրկեանում մոխիր դարձաւ: Նա սկսեց կարդալ մնացած նամակները: Այժմ նրա դէմքը փոքր-ինչ խաղաղ էր: Բայց ճակատի վրայ տակաւին նշմարւում էին կնճիռներ: Երբեմն նամակը ցած էր գնում եւ իր յիշողութեան տետրակի մէջ ինչ-որ գրում